



Հ. ԱՐԱՄՅԱՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՐԴԻՆԵՐԻ ԵՎ ԴՈՒՏՏՐԵՐԻ ՃԸՐՔՈՒՄ



յս տարվա մարտի 1-ին, Սովետական Հայաստանի բոլոր քաղաքներում, գյուղերում և ավաններում տեղի ունեցան աշխատավորների դեպուտատների տեղական Սովետների ընտրությունները: Մայր Հայրենիքի հարյուր հազարավոր քաղաքացիների հետ, հայրենադարձ հայերը այս անգամ ևս մեծագույն խանդավառությամբ և հրճվանքով կենսագործեցին աշխարհի ամենադեմկրատական կոնստիտուցիայով՝ Ստալինյան կոնստիտուցիայով նախատեսված իրավունք՝ ընտրել հարազատ իշխանության պետական գործիչներին, այս անգամ՝ տեղական Սովետների դեպուտատներին:

Սովետական Հայաստանի նոր քաղաքացիները՝ հայրենադարձ հայերը, ո՞չ միայն

օգտվում են ընտրելու իրավունքից, որից, մեծ մասամբ, զուրկ էին արտասահմանում, այլև բախտ ունեն ընտրվելու որպես հարազատ իշխանության պետական օրգանների դեպուտատներ: Ինչպես դեպուտատական նախորդ ընտրություններին, այս վերջին ընտրությունների ժամանակ ևս մի քանի հայրենադարձ հայեր, մեր Հայրենիքի լավագույն որդիների ու դուստրերի շարքում, իրենց աշխատավայրի կողեկտիվի կողմից առաջադրվեցին դեպուտատության թեկնածուներ և մարտի 1-ին, քեարկության օրը, ընտրվեցին որպես քաղաքային, ույոնական, գյուղական և ավանային Սովետների դեպուտատներ:

Ովքե՞ր են այդ դեպուտատները, ժողովուրդը ո՞ւ մ է տվել իր վստահությունը: Մանոթանանք նրանցից միայն մի քանիսի՝ երեվանի քաղաքային Սովետի հինգ դեպուտատների կյանքի և գործի հետ:

ԴԵՐՈՒՏԱՏ ՄԵԼԻՆԵ ՄԱՆՈՒՇՅԱՆԸ

Թշվառ մանկություն, կյանքի դառն հարգածներ, վիշտ, անզուապ ու համարձակ պայքար և վերջապես՝ երջանիկ կյանք Մայր Հայրենիքի հողի վրա— այս է Մելինե Մանուշյանի կյանքի ուժին:

Մելինեն ծնվել է 1914 թվականին, Կոստանդնուպոլսում: Վաղ մանկության տարիներին, Մելինեն կորցնում է ծնողներին, մոռամ անօգնական որբուժի: Որբանոցների հետ նա տեղափոխվում է քաղաքից քաղաք, երկրից երկիր՝ Կոստանդնուպոլիս, Աղքարազար, Հոնաստան, Ֆրանսիա: Փարիզում նրան հաջողվում է ընդունվել Դպրոցական ուժինանց վարժարանը, Ուշիմ և ընդունակ

աշակերտուուին 1929—1930 դպրոցական տարիշրջանին ավարտում է դպրոցը գրաչալավա («գերազանց» գնահատականներով):

Բարձրագույն կրթություն ստանալու տեհնը մնում է չհագեցված՝ ինչպես տենչը շատ ու շատ նմանների, որոնք ապրում են դրամատիրական երկրներում, ուր, ինչպես հայտնի է, բարձրագույն կրթությունը սակավաթիվ մարդկանց մենաշնորհն է....

Որբանոցների զրկանքներով և դառնություններով լի կյանքը, բարձրագույն ուսման ճանապարհի վրա անհաղթահարելի խոշրնդուտները, մարդավայիկ ապրելու դեմ հարուցված լեռնակուտակ դժվարություննե-

րը՝ վաղաժամորեն հասունացնում են պատանունու գիտակցությունը: Նա կարողանում է կողմնորոշվել և գտնել ճիշտ ճանապարհ: Մելինեն առանց տատանվելու ընտրում է Սովետական Հայաստանի բարեկամների շրջանը: Պայքարի ու մաքառման ճանապարհն էլ 1933 թվականին նա հանդիպում է Միսակ Մանուչյանին, որի հետ կապում է իր



կյանքը, գործը, իր խոհերն ու երազանքները:

Երկու երիտասարդների՝ որոնց հոգին համակված է համամարդկային նույն իդեալներով, որոնց էությունն ամբողջ թրթում է Հայունասիրական նույն շերմ կայծերով, կյանքի ուղին միակցվում է, նույնանում. այլևս անբաժան ընկերներ և դորձակիցներ են նրանք՝ մինչեւ այն ահավոր օրը, երբ գետապոյականների զաժան գնդակները խլում են երիտասարդ Միսակի հանրանվեր կյանքը:

Միսակ Մանուչյանը մեծ դեր է խաղում Մելինեի գաղափարական աճի և կոփման գործում: Մելինեն նրանից և Ֆրանսիայի պայքարող մարտիկներից սովորում է արիակամություն, վճռականություն, դժվարությունները հաղթահարելու մեծ ունակություն: Մի-

սակ Մանուչյանը նմիրված, սիրված, հիարդար ավելի լայն ժողովրդականություն վայելող ղեկավարներից մեկն է դառնում Հայաստանի բարեկամների ընկերության, որը չուղավորումներ ունի Ֆրանսիայի բոլոր հայաշատ կենտրոններում: Մելինեն այդ ընկերության կենտրոնական վարչության անդամ էր և կենտրոնական գրասենյակի գործերի կառավարիչ նա վարում էր գրագրությունները, թղթակցություն պահպանում մասնաճյուղերի, շրջանի ղեկավար ընկերների հետ: Կազմակերպում է գրադարան, բաշխում է աշխատավորական լայն մասսաներին Սովետական Հայաստանից ստացվող գործերն ու պարբերական մամուկը, անձամբ կազմակերպում երեանից ուղարկված կինոֆիլմերի ցուցադրումը Փարիզում, փարիզյան հայահոծ արվարձաններում, նահանգական քաղաքներում: Բոցաշոմը Հայրենասեր երիտասարդ աղջիկը, գավառից գավառ ըլլամամարդ միտինգներում շերմ ելույթներ է սննենում, բանավոր, կենդանի խոսքը տանելով այն հեռավոր վայրերի հայ պանդուխտ աշխատավորությանը, որոնց հետ հրապարականու Միսակը կարողանում է խոսել «Զանգվիթ» տրիբունայից, Հայրովանալով միշտ և ամենուրեք անձամբ հասնել, անձամբ կազմակերպել ու ոգեշնչել: Մելինեն հանդիսանում է ֆրանսահայ կանանց առաջարկմական միության հիմնադիրներից և ամենաակտիվ ղեկավարներից մեկը: Հայրենիքի սերը, Հայրենիքի օրավոր նվաճումները ովերում էին նրան, և նա իր սրտի շերտ խոսքն էր տանում Ֆրանսիայում տեղ գտած Հայրենաբազմ, օտարական հայերին:

1938 թվականին լուժարքի է ենթարկվում Հայաստանի բարեկամների ընկերությունը, տեղը զիշենով Ֆրանսահայ ժողովրդական միությանը, որի կենտրոնական վարչության կազմի մեջ մտնում են Միսակն ու Մելինեն՝ առաջինը որպես առաջին քարտուղար, երկրորդը՝ որպես կենտրոնական գրասենյակի գործերի կառավարիչ:

1939 թվականի սեպտեմբերի 1-ին պայթում է Համաշխարհային երկրորդ պատերազմը:

Միսակ Մանուչյանը 1942 թվականի աշնանը կազմակերպում է Փարիզում և շրջակայքում պարտիզանական ինտերնացիոնալ շորս ջոկատներ և նշանակվում է նրանց հրամանատար: Այս չորս մարտական ջոկատները, որոնք կոչվում էին «Մատլինգրադ», «Չապաև», «Վիկտոր Հյուգո» և «Ազատություն», մի ամբողջ տարի հսկայական աշխատանք են տանում: Գնդացիներով, ձեռնառումբերով և ատրճանակներով զինված, հարձակվում են ղերմանական փո-

խաղամիջոցների վրա, գծից հանում ռազմամիջերք փոխադրող ամրող գնացքներ, խորտակում հիտլերյան բանակի բազմաթիվ բեռնատար և մարդատար ավտոմեքենաներ, պայթեցնում զինվորական օրեկտներ, ոչնչացնում ֆրանսիայի դավաճանների, գետապոյական հրեշների, այդ թվում փարփի պարետ Ռիտտերին և գեներալ Ֆոն Շաումբուրգին...: Մելինեն ամենաակտիվ մասնակցություն է ունենում այս բոլոր պարտիզանական սխրագործությունների կազմակերպման և ի կատար աժման մեջ: Նա կատարում է գրագությունները, շարադրում և բազմագործ է թուցիկները, կապ է պահպանում մարտիկների միջև, տեղ հասցնում հրամանատարի ցուցումներն ու կարգադրությունները, զենք փոխադրում, վիրավորված պարտիզանների գաղտնի բժշկական սպասարկությունը կազմակերպում, ձերբակալվող ընկերներին սննդամիջերքի և այլ կարիքների մասին...: Եվ այս բոլորի մեջ դեռ ժամանակ է գտնում «Ազատություն» անունով Հայերեն թուցիկ-թերթը՝ պատրաստելու: Շատ անգամ նա ենթարկվում է ձերբակալվելու վտանգին, բայց միշտ էլ, շնորհիվ իր հիանալի զգայնության և պատրաստամտության, կարողանում է խուստ տալ, կորցնել հետքերը: Նրան կոշում են «Անտեսանելի»:

Հասնում են ճակատագրական օրեր: Իր հերոսությամբ ու անհաջող պայքարով աշքի ընկած խիզախ հրամանատարը՝ Միսակ Մանուչյանը, 23 մարտական ընկերների հետ, մի դավաճանի մատնությամբ ձերբակալվում է:

Բանտում և դատարանի առջև, շարշարված, խոշտանգված պարտիզանները և նրանց հրամանատարը շեն կորցնում իրենց արիությունը, իրենց պահում են հերոսի պես: Դատարանը որոշում է գնդակահարել նրանց: Հաջորդ օրը՝ 1944 թվականի փետրվարի 24-ին դատավճիռն ի կատար է ածվում:

Մանուչյանի և նրա զինակիցների ձերբակալվությամբ անմիջապես հետո, Գեստապոն և գերմանական ֆաշիստներին ծախված ֆրանսիացի լրտեսներ սկսում են խիստ հետամուռ լինել բանտարկելու Մելինեին: Բայց պարտիզանական կենարոնի աշակցությամբ, կեղծ անձնագիր ստանալով, Մելինեն կարողանում է ծպտվել: Ամուսնու և իր մարտական ընկերների հերոսական մահը խորապես ցնցում է երիտասարդ կնոջ մարդկային էությունը, վտանգում նրա փիզիկական առողջությունը: Բայց իր կանացի մարմնում կար պողատակու կամք, ամուգ հոգի, նա շուտով վերագունում է իրեն և շարունակում

պայքարող մինչև հաղթանակ և մինչև Սովետական Հայաստան գալու օրը:

1945 թվականի աշնանը Մելինե Մանուչյանը գալիս է Հայրենիք՝ Սովետական Հայաստան: Գրկաբաց, չերմ ընդունելովիլում է անում մեր հայրենական ժողովուրդը: Նրա գալուատը ավետում էր տասնյակ հազարավոր պանդուխտ հայերի վերադարձը Հայրենիք, ավետում էր հետագա զանդվածային հայրենադարձությունը:

Պետովիյունը Ստալինյան պողոտայի վրա, նորակառուց մի շենքում, օժոում է նրան հատուկ հարկաբաժնով, մշտական բնակության համար: Մելինեն սահնում է 500 ուլու ամսական թոշակ, Արուասահմանի հետ կուլտուրական կապի Հայկական ընկերությունում՝ հարմար և լավ վարձատրվող պաշտոն: Թվում է, թե ոչինչ այլևս հարկավոր չէ, կարելի է ապրել խաղաղ ու հանդիսատ...: Բայց Մելինեի բնավորությանը հատուկ չեր հանգստովիյունը: Նա մտնում է երևանի Պետական համալսարանի ֆիլոլոգիական ֆակուլտետը՝ բարձրագույն ուսում ստանալու իր վաղուցվա իդար կենսագործելու: Առաջին կուրսից մինչև հինգերորդն անցնում է գերազանց գնահատականներով և ավարտում է առաջին կարգի դիպլոմով: Մելինեն այնուհետև ընդունվում է համալսարանի ասպիրանտուրան՝ ժուռալիստիկայի գծով: Նա արդեն փայլուն հաջողությամբ հանձնել է ասպիրանտական մինիմումները և սկսել աշխատել իր դիսերտացիայի վրա, որի թեման է՝ «Հարություն Սվաջանի «Մելու» և նրա ժամանակը»: Մի քանի ամսից կպաշտպանի իր դիսերտացիան և կստանա գիտական կոչում:

Սովետական Հայաստանում, ուսումնական և գիտական աշխատանքի հետ միասին, Մելինե Մանուչյանը ունեցել է հասարակական ակտիվ գործունեություն՝ գրել է հոդվածներ, ունեցել է ելույթի բազմամարդ հավաքությունը: Այժմ էլ համալսարանի օրգան «Սովետական ուսանողություն» թերթի խմբական կոլեգիայի անդամ է և գրականքնադատական բաժնի վարիչ: Արդեն երկու անգամ՝ 1947 և 1950 թվականներին, ընտըրվել է երևանի քաղաքային Սովետի դեպուտատ: 1953 թվականի մարտի 1-ին, նա երրորդ անգամ ընտըրվեց մայրաքաղաքի Սովետի դեպուտատ:

Ժողովուրդը ճանաշում, սիրում և վստահում է Հայրենիքին նվիրված, խիզախ, համարձակ և ընդունակ մարդկանց:

ԴԵՊՈՒՏԱՏ ԲԱՐՍԵԼ ՏՈՆԻԿՅԱՆԸ

«Ուկի ձեռներով վարպետը»: Այսպես են կոչում Թէթև արդյունաբերության մինիստրության Մետաղյա իրերի գործարանի մեխանիկան ցեխի ավագ վարպետ Բարսել Տոնիկյանին:

Թյուրքիայի Բրուսա նահանգի Մեծ Նորդյուուկ կողման հայաբնակ գյուղում սրանից 43 տարի առաջ ծնվեց Բարսելը, չքավոր դյուլացու ընտանիքում: Երեխան հինգ տարեկան էր՝ երբ հասավ հայոց պատմության խորրագում աղետը — 1915 թվականի արևմբահայերի տեղահանություններն ու զանգվածային կոտորածները: Երեխան, յուրացինների և գյուղի ամբողջ բնակչության հետ, քայլելով ճանապարհ ընկավ գեպի տառապանք և մահ...: Հասավ մինչև Գոնիա նահանգի մի գյուղը: Իր համապատասխացիներից շատերի հետ, Բարսելը հայրն ու մայրն էլ կորան համատարած աղետի մեջ...: Ինքը հրաշքով փրկվեց, բայց սուլթանական Թյուրքիայի շտեսնված բարբարսությունը անբուժելի վերք բացեց նրա մատաղ հոգում: 1918 թվականի գինադադարից հետո, որբացած երեխան խառնվեց վերապրող խլակների կարավաններին և քայլեց, անդիտակից ու մտամոլոր: Անցան շաբաթներ: Մի օր էլ փոքրիկ Բարսելը իրեն գտավ Կոստանդնուպոլսի փողոցներում, որպես անապաստան երեխա, մերկ ու սոված...: Նրան տարան կուլալի հայոց որբանոցը: Այնուհետև նա ընկավ Հոնաստան, ուր ժամանակավորապես պատսպարվեց ամերիկյան որբանոցներից մեկում, բայց մի օր էլ ամերիկացիները հանկարծ ցրեցին որբանոցը: Հազարավոր անշափահաս որբեր ու որբուժիներ նետվեցին փողոցները, անտեր ու անօգնական: Այն ժամանակ, ներկատուի հայ գաղութը, որ, համեմատած մյուս հայ գաղութների հետ, փոքր ինչ ավելի ուներ է, որոշեց այդ երեխաներից մի քանի հազարին բերել ներկատուս, տեր կանգնել աշխատանքի կամ արհեստի տալ: Եղիստոս բերված որբերի և որբուժիների թվումն էր Բարսել Տոնիկյանը: Նա դեռ վաղ երեխայությունից, որբանոցներում, բացառիկ սեր էր ցուցաբերել գեպի մեքենան և տեխնիկան, ու բացառիկ ընդունակություններ՝ մեխանիկի արհեստում: Եղիստոսում նա մտավ Զագրջյանների մետաղագործական ֆաբրիկան՝ արհեստ սովորելու Կարճ ժամանակ հետո դարձավ աշքի ընկնող վարպետ: միաժամանակ խառաս

էր, փականագործ, գյուտարար-նորարար...: Այնտեղ, ուր ելքոպայում կամ Ամերիկայում մասնագիտական բարձրագույն կրթություն ստացած ինժեներներն անձրկում էին, հաջողում էր այս ինքնուա վարպետը. սարքի էր բերում անհուսալիորեն խանդարված համարվող մեքենաները, իր ձեռքով նոր մասեր էր սարքում...:



Նա օրեր ու գիշերներ երազում էր սիրասուն Հայրենիքը, ուզում էր տեղափոխվել Սովետական Հայաստան և իր սեփական ժողովրդի օգտին ծառայեցնել իր մասնագիտությունն ու աշխատանքը: «Բախտավոր կլինեմ, — ասում էր նա, — երբ ապրեմ իմ հարազատ Հայրենիքում, երբ զավակներս ընդիշաւ փրկվեն իմ երեխայությունը ունենալու վտանգից, մի վատնդ, որ միշտ առկա է այս երկրներում»:

Երբ Սփյուռքից զանգվածային հայրենադարձության մեծ շարժումն սկսվեց, վերցնելով կնոշն ու երկու երեխաներին, Տոնիկյանը եկավ Հայաստան:

Հայրենիք հասնելուց մի քանի օր հետո նա աշխատանքի ընդունվեց Թէթև արդյունաբերության մինիստրության Մետաղյա ի-

բերի գործարանը, որը պատրաստում է կերասինկաներ, էլեկտրական արդուկներ, նիկելապատ և կիսանիկել մահճակալներ, էմալապատ ամաններ: Բարսեղը շուռով աշքի ընկավ իր ազնիվ, բոլորանվեր աշխատանքով և վարպետությամբ, նշանակվեց մեխանիկական ցեխի ավագ վարպետ: Իր նկատմամբ եղած այդ կատահնությունը ովորդից շնորհալի վարպետին: Նա ոչ շախատանք է խնայում և ո՛չ էլ ժամանակ, որպեսզի գործարանի բոլոր մեքենաները շարունակ սարքին լինեն: Գործարանում աշխատանքի անցնելուց քիչ հետո, նա հնարեց նոր տիպի մի կերասինկա, որ շուկայում վաճառվող հին տիպի կերասինկայից և՛ ավելի գեղեցիկ է, և՛ ավելի խնայողական: Հնի համեմատությամբ՝ խնայվում է ալյումին, պղինձ, խնայվում է թթվածնազողուամի աշխատանքը: Այդպիսով, յուրաքանչյուր կերասինկայի վրա խնայվում է 17 ռուբլի— այդքան շահ գնորդ հասարակության համար: Տոնիկյանը արժանացավ մինիստրության գովասանագրին և ստացավ 12.000 ռուբլի պարգև:

Տոնիկյանը պտղատու և գեղազարդող ծառերով զարդարված սեփական բնակարանումի Զրաշատ փողոցով, Բաղրամյան պողոտայից քիչ հեռու: 14 տարեկան որդին՝

Միհրանը գնում է դպրոց և լավ սովորողներից է: Աղջիկը՝ 9 տարեկան Մանիկը երաժշտական կրթություն է ստանում Զայկովսկու անվան երաժշտական տասնամյա դպրոցում:

Տոնիկյանը, որ ամսական ստանում է ոչ պակաս քան 2.000 ռուբլի, ապրում է բարօր և եղանակ, աշխատում է իր երազած Հայրենիքում, գործում է իր ժողովրդի, իր եղբայրների և քույրերի համար...: Ահա թե որտեղ է գտել նա իր հսկական երջանկությունը, ահա թե՝ երբ դարձավ նա բախտավոր մարդ:

Երևանի Մետաղյա իրերի գործարանի կոլեկտիվը, բարձր գնահատելով Տոնիկյանի նվիրված աշխատանքը և հայրենասիրությունը, առաջարդեց նրան երևանի քաղաքային Սովետի գեպուտատության թեկնածու: Ինչպես սպասելի էր, Տոնիկյանն ընտրվեց:

Վերջերս նա աշխատում է ստեղծել նոր տիպի կերասինկա, իր նախորդ ստեղծածից ավելի գեղեցիկ և ավելի խնայողական:

— Եթե որոշել է, որին անպայման գլուխ կհանի,— ասում է գործարանի դիրքուոր Թենիկ Աբրահամյանը, «ոսկի ձեռներով վարպետ» նկատմամբ անսահման ստահնությամբ:

ԴԵՐՈՒՏԱՏ ՀԱԿՈԲ ԲԱԶԱՐՅԱՆԸ

Դեռևս 33 տարեկան մի երիտասարդ՝ բայց ինչ փոթորկոտ կյանք, ինչքան թափառումներ, վտանգներ, զրկանքներ ու տառապանք, մինչև այն օրը, երբ նա ուժք դրեց Սովետական Հայաստան, և գտավ հանգիստ, ապահովություն, երջանիկ աշխատանքային առօրյա և ապագայի փայլուն հեռանկարներ:

1919 թվականին Թյուրքիայի Մարաշ քաղաքում ծնված Հակոբ Բազարյանը ծծկեր երիսխ էր ղեռ, երբ քեմալական թյուրքի յաթաղանը գործեց Մարաշում, կոտորելով իթթիհատական թյուրքի 1915—1918 թվականների համատարած կոտորածներից մի կերպ ազատած և հազիվ մի տարուց ի վեր իրենց ծննդավայրը վերաբարձած Մարաշի հայերին...: Այս թյուրքական նոր սպանդից փրկվեցին հազիվ մի քանի ընտանիք, այդ թվում Հակոբի ընտանիքը:

Բազարյան ընտանիքը, մի նոր կոտորածի մշտագու սպառնալիքից ազատվելու համար, նորից դիմում է պանդստության, անցնում է Հալեպ, որտեղ կրում է գործազրկության և դրան ուղեկցող թշվառության սարսափները: Հակոբի մայրը, թերասնումի հետևանքով

թոքախտի ճիրաններն է ընկնում և մահանում: Թշվառությունից հալածական ընտանիքը Հակապից գաղթում է Բեյրութ, ուր ևս հնարավոր չի լինում ապրուատ ապահովելու նորից գաղթ. այս անգամ ընտանիքը անցնում է Ֆրանսիա և հաստատվում Մարսելում: Հակոբի հայրը և երկու ավագ եղբայրները բանվորություն են անում Մարսելում, բայց նրանց շահը անբավարար է լինում ամրող ընտանիքի ապրուատը պահպանվելու, ուստի դպրոցահասակ փոքրիկ Հակոբը և նրանից փոքր ինչ մեծ եղբայրը հարկադրվում են գիշերները մինչև ուզ ժամանակ թերթ ծախել փողոցներում, սովամահ շինելու համար...:

Այդտեղ էլ ապրուատի բավարար հնարավորություններ շգտնելով, պանդուխտ ընտանիքը մեկ անգամ էլ ձեռք է վերցնում պանդստության ցուազը և մեկնում օվկիանոսի մյուս ափը, Բրազիլիա: Այստեղ էլ, ընտանիքը տարիներ տևող զրկանքներից և ճիգերից հետո, մի կտոր հացի տեր է դառնում: Հակոբը չի բավարարվում միայն հացով, ուզում է ամեն գնով ուսում ստանալ՝ միջնակարգ,

բարձրագույն։ Ընտանիքը ընդդիմանում է. նա մի կերպ կարողանում է ավարտել լիցեյը, հետո՝ Սան-Պաուլոյի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը։ Դեռ ուսանողական նստարանից սկսում է հասարակական եռուն գործունեության և հայ առաջադիմական շրջաններում և բնիկ բրազիլիական առաջադիմական դեմոկրատական շրջաններում։ Պորտուգալերեն լեզվով հրատարակում է «Արարատ» թերթը, նպատակ դնելով բրազիլիացիներին ծանոթացներու Սովետական Հայաստանի նվաճումների և հայ մշակույթի հետ։ Հանդիսանում է հիմնադիրներից մեկը Սան-Պաուլոյի Հայկական մշակութային ընկերության՝ դեմոկրատական և հայրենասիրական մի ընկերություն, որի վկաց-պրեզիդենտը Հակոբ Բազարյանն էր։ Նա մեծ աշխատանք է տարել բրազիլահայոց ներգաղթի գործի կազմակերպման մեջ։ 1947 թվականին եղել է հիմնադիրներից մեկը բրազիլահայ ազգային խորհրդի։ Մասնակցել է բրազիլիական դեմոկրատական թերթերի խըմբագրության, աշխատակցել է զանազան բրազիլիական թերթերի, Ակտիվ մասնակցություն է ունեցել խաղաղասերների համաշխարհային շարժման նվիրված բրազիլիական մարմիններին...։ Իր առաջադիմական գործունեության համար ձերբակալվել է, բանտարկվել։ Բրազիլիական ռեակցիոն մամուլը տպել է նրա լուսանկարը և պահանջել կառավարությունից՝ արտաքսել նրան Բրազիլիայից, որպես վտանգավոր ագիտատոր, «երկրի կարգը խանգարող» և այլն։ Պատերազմի ամերիկյան հրձիքներին ծախու բրազիլիական ռեակցիոն կառավարությունն այդպես էր գնահատում իր երկրի ազատության և խաղաղության համար պայքարող մարտիկին, սակայն բրազիլիական ժողովուրդը մեծ սիրով է ընդունում նրան։ 1949 թվականին, բրազիլիական խաղաղասերները, զնահատելով նրա նվիրված աշխատանքը, ընտրել են նրան բրազիլիական դեմքացիայի անդամ՝ մասնակցելու Փարիզի Խաղաղության Համաշխարհային Կոնգրեսին։

1949 թվականի սեպտեմբերին Բազարյանը մասնակցում է Ենթոկրատական երիտասարդության Համաշխարհային կոնգրեսին, Բուդապեշտում, որպես Ֆրանսիայի, Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգայի հայ երիտասարդության դիմագով։

1950 թվականին Հակոբը փոխադրվեց Մուկվա, այնտեղից էլ ուղիղ Երևան և ստացավ սովետական քաղաքացիության իրավունք։ Հայրենիք հասնելուց քիչ հետո նա ընդունվեց Գիտությունների ակադեմիայի Փիլիսոփայական սեկտորի ասպիրանտ, 700 ուսումնական թոշակով, ապահովվեց բնակարանով և ամեն տեսակի դրամություններով, որպես-

զի երեք տարվա ուսումնառությունից և գիտական աշխատանքից հետո կարողանա դիսերտացիա պաշտպանել և ստանալ փիլիսոփայական գիտությունների թեկնածուկի գիտական աստիճան։ Գիտությունների ակադեմիան նրա համար հատուկ դաստիարակություններու նշանակեց, կարճ ժամկետում մայրենի լեզու և ուսաբերեն սովորելու համար։ Արտակարգ համառությամբ և քրտնաշան աշխատանքի շնորհիվ Հակոբը այժմ խոսում և գրում է այդ երկու լեզուներով էլ։



Գիտությունների ակադեմիայի կոլեկտիվը 1953 թվականին նրան առաջադրեց Երևանի քաղաքացին Սովետի գեպուտատության թեկնածու։

Ծննդություններից մի քանի օր առաջ, Ակադեմիայի նիստերի դահլիճում, գեպուտատության առաջադրված Հակոբ Բազարյանը հանդիպում ունեցավ իր ընտրողների հետ։ Ավելի քան 30 տարեկան հասակում Հայրենի երկրում հայրենախոս դարձած երիտասարդի առաջին հրապարակային ելույթն էր մայրենի լեզվով։ Հուգիչ էր պահը և Հակոբի և բոլոր նրանց համար, ովքեր ծանոթ էին նրա անցյալին և կենսագրությանը։

— Կներեք ինձ, հարգելի ընկերներ, որ քեզ ինչպես հարկն է չեմ տիրապետում հայոց լեզվին, — այսպես սկսեց նա իր ելույթը և շարունակեց։ — Ես չեմ ունեցել այն

երջանիկ պայմանները, որ ունեն մեր սովետական մարդիկ: Մոտ երկու տարի է, ինչ եկել եմ Սովետական երկիր, և միայն այս տեղ հարավորություն ունեցա սովորելու իմ մայրենի լեզում:

«Իմ կյանքի պատմությունը բնորոշ չէ միայն ինձ համար: Ես պատկանում էի հայ ժողովրդի այն հատվածին, որը բախտ չունեցավ օգտվելու ուսա մեծ ժողովրդի բարեկամության և Սովետական իշխանության անսահման բարիքներից: Ես պատկանում էի հայ ժողովրդի արևմտայն հատվածին, որը իմպերիալիստների կողմից հրահրված թյուրքական ջարդերի հետևանքով հալածվեց, կոտորվեց ու ցրվեց աշխարհով մեկ: Ես պատկանում էի այն թափառական հայերի թվին, որոնք այսպես կոշված կապիտալիստական

«դեմոկրատիա»ներում ճանաչեցին գործադրություն, սովոր, Հայրենիքի կարուղ և ամեն տեսակ դժվարություններով:

Դառնություններով ու դժվարություններով իմ իր կյանքը պատմելուց հետո նա ասաց.

«Միմիայն սովետական վիզան փրկեց իմ կյանքը: Սովետական կառավարությունից ես ստացա ոչ միայն ապաստարանի իրավունք, այլև սովետական քաղաքացու բոլոր իրավունքները, որոնք ամենալայնն են աշխարհում...»:

Արտասահմանում ընդամենը երկու տարի առաջ օտարաբարբառ, այսօր Հայրենիքում արդեն հայերենախոս, ընդամենը երկու տարի առաջ արտասահմանում «անբաղձալի» օտարականը, այսօր, Հայրենիքում, լիբրավ քաղաքացի և գեպուտատ— ահա՝ Հակոբի կյանքի ամփոփումը երկու տողով:

ԴԵՊՈՒՏԱՏ ԳԵՂՐԳ ՆԱԼԶԱՋՅԱՆԸ

Երևանի Կոշիկի առաջին գործարանի անվանի ստախանովական ձեւարար-վարպետ Գեղրդ Նալզաջյանը ծնված է Ռոդոստոյում (Թյուրքիա): Իր սերնդից հարյուր հազարավոր արևմտահայերի նման, անցած է կյանքի դաժան ուղի: Իր պանդխոտության և դառնալի կյանքին հրաժեշտ է տված և ողջունած է նոր արև, նոր կյանք, երբ Բուժարեստից իր հարազատ Հայրենիքն է եկած 1946 թվականին: Երևանում հաստատվելուց ընդամենը երեք օր հետո դիմել է Կոշիկի առաջին գործարանը և աշխատանքի ընդունվել: Հենց առաջին օրերից էլ աշքի է ընկել իր եռանդուն և բարեխիղճ աշխատանքով: Միստեմատիկ կերպով պլանները գերակատարում է 250—300 տոկոսով: Գեղրդն այժմ աշխատում է 1959 թվականի հաշվին, կատարելով մինչև այդ եղած բոլոր տարիների պլանները: Նալզաջյանը մեծ աշխատանք է տանում նաև նյութեղենի խնայողության գործում: Հենց միայն վերջին տաս ամիսներում նա խնայել է 20.000 դիցիմետր բարձրորակ կաշի: այդ խնայված կաշվով կարելի է պատրաստել 1.300 զուգ կոշիկ:

Վարպետ Գեղրդը 1950 թվականին արդեն ընտրվել էր Երևանի քաղաքային Սովետի դեպուտատ: Այժմ երկրորդ անգամն է, որ նա ընտրվեց:



Այս հասարակական բարձր գնահատանքն ու վստահությունը նոր եռանդ է տալիս վարպետին՝ աշխատանքային նորանոր սիրագործությունների համար:

ԴԵՊՈՒՏԱՏ ՀԱԿՈԲ ԴԵՄԻՐՃՅԱՆԸ

Երևանի Մեխանիկական գործարանի փականագործ վարպետ Հակոբ Խաչատրի Դեմիրճյանը ծնվել է 1908 թվականին Թյուրքիայի Այնթապ քաղաքում, դարբինի ընտանիքում։ 1913 թվականին Հակոբի ընտանիքը թողնելով ծննդավայրը, հաստատվում է Սիրիայի Հալեպ քաղաքում, որտեղ մնում է մինչև 1918 թվականը։ Համաշխարհային առաջին պատերազմի վիճակարից հետո, Հակոբը վերադառնում է իր ծննդավայրը, որտեղ մնում է մինչև Կիլիկիայի պարագում՝ 1920 թվականը։ Այնուհետև նա տեղափոխվում է Հալեպ, իսկ այնտեղից՝ Բեյրութ, միշտ զբաղվելով փականագործի իր արձնատով։ Բեյրութում Հակոբը աշքի է ընկնում հայ հասարակական առաջադիմական շքրշաններում իր կատարած հայրենասիրական աշխատանքներով։

Հակոբ Դեմիրճյանը կիրանանից Հայրենիք է ներգաղթել 1946 թվականին։ Հայրենիք գալու առաջին օրերից նա աշխատում է Երևանի Մեխանիկական գործարանում որպես փականադործ վարպետ։ Գործարանում իսկույն սիրեցին այդ աշքաբաց, ընդունակ ու շնորհալի վարպետին, որը օրվա առաջադրանքները կատարում է 150—200 տոկոսով։ Դեմիրճյանը երկու անգամ ընտրված է Մոլոտովյան ռայոնի ռայոնական Սովետի դե-



պուտատ։ Մարտի 1-ի ընտրություններին, ավելի մեծ պատիվ տրվեց և ավելի մեծ վտանգություն հայոնվեց ստախանովական վարպետին— նա ընտրվեց Երևանի քաղաքային Սովետի գեպուտատ։

